



ՄՈՒՐԲ ՅԱԿՈԲ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Մ ԿԵՂԵՅԻ

ՏՕՒ Ա. ՅԱՐՈՒԹԵԱՆ
20 ԱՊՐԻՒԼ 2025

Կիրակնօրեայ Ընթերցումներ	Էջ 1
Ծանուցումներ	Էջ 2

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ ԳԻՐՔԷՆ (1.15-26)

Համբարձումէն քանի մը օրեր ետք, երբ շուրջ հարիւր քսան հաւատացեալներ մէկտեղուած էին, Պետրոս ոտքի ելլելով ըսաւ.

«Եղբայրներ, պէտք էր կատարուէր Սուրբ Գիրքին մէջ գրուածը, այն ինչ որ նախօրօք Սուրբ Հոգին ըսած էր Դաւիթի բերնով՝ Յուդայի մասին, որ Յիսուսը ձերբակալողներուն առաջնորդողը եղաւ: Յուդա մեր խումբէն էր, մեզի պէս առաքելական ծառայութեան համար ընտրուած: Բայց իր անիրաւ մատնութենէն ետք, որուն վարձքով ագարակ մը գնեց, երեսնիվայր ինկաւ այնտեղ եւ փորը ճեղքուելով՝ փորոտիքը դուրս թափեցաւ: Բոլոր Երուսաղէմացիները այս մասին իմացան, եւ այդ պատճառով այդ ագարակը իրենց բարբառով “ակեղղամա”, այսինքն՝ “Արեան ագարակ” կը կոչեն: Արդ, Սաղմոսներու գիրքին մէջ գրուած է. “Թող անոր տունը աւերակ մնայ, եւ մարդ հոն չբնակի” իսկ ուրիշ տեղ մը կ'ըսէ. “Իր պաշտօնը ուրիշ մը թող առնէ”: Այստեղ կան մարդիկ որոնք միշտ մեր հետը եղած են Տէր Յիսուսի երկրաւոր առաքելութեան ամբողջ տեւողութեան, Յովհաննէսի ձեռքով անոր մկրտութենէն մինչեւ

երկինք համբարձման օրը: Ասոնցմէ մէկը պէտք է տասնըմէկիս միանայ՝ Քրիստոսի յարութեան վկայ ըլլալու համար»:

Այն ատեն հաւատացեալները երկու հոգի ներկայացուցին. Բարսաբա կոչուած Յովսէփը, որ արդար մականուանուեցաւ, եւ Մատաթիան: Ապա հետեւեալ աղօթքը ըրին. «Դուն, Տէր, որ կը ճանչնաս բոլոր մարդոց սիրտերը, ցոյց տուր մեզի թէ այս երկուքէն ո՞ր մէկը կ'ընտրես առաքելական այս պաշտօնին համար, որմէ Յուդա ինկաւ՝ ինքն իր ճամբան երթալու համար»:

Ապա երկու անուններուն վրայ վիճակ ձգեցին: Վիճակը Մատաթիային ելաւ, եւ անիկա տասնըմէկ առաքելներուն կարգին դասուեցաւ:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ (16.1-8)

Շաբաթ օրը երբ անցաւ, Մարիամ Մագթաղենացին, Մարիամ՝ Յակոբի մայրը եւ Սողոմէն գացին խոռնկեր գնեցին եւ պատրաստեցին, որպէսզի երթան եւ օծեն Յիսուսի մարմինը: Կիրակի առաւօտ կանուխ, արեւածագին, գերեզման եկան: «Ո՞վ պիտի գլորէ գերեզմանի մուտքին դրուած քարը», կը հարցնէին իրարու, որովհետեւ քարը շատ մեծ էր: Սակայն երբ նայեցան, տեսան որ քարը արդէն իսկ գլորուած էր: Գերեզմանէն ներս մտան եւ ճերմակ զգեստ հագած երիտասարդ մը տեսան, որ աջ կողմը նստած էր: Սարսափեցան: Երիտասարդը ըսաւ անոնց. «Մի՛ վախնաք, գիտեմ

... հոս չէ,
յարութիւն
առաւ:

որ խաչուած Նազովրեցի Յիսուսը կը փնտռէք. բայց հոս չէ, յարութիւն առաւ: Տեսէ՛ք, զինք հոս դրած էին: Այժմ գացէք, ըսէք իր աշակերտներուն եւ Պետրոսի, որ ահա Յիսուս ձեզմէ առաջ կ'երթայ Գալիլիա. հոն պիտի տեսնէք զինք, ինչպէս որ ըսած էր ձեզի»:

Երբ ասիկա լսեցին, դուրս փախան գերեզմանէն, զարհուրած եւ ապշահար, ու ոչ մէկուն բան մը ըսին, որովհետեւ կը վախնային:

ՀԻՄՆԱԴԱՆՐՈՒՄ ԱՅԵԼՈՒԹԻՒՄ

Բարեհաճեցէք հեռաձայնել

Արժ. Տ. Գառնիկ

Աւ. Քինյ. Գոյումեանի.

514 909 5203 քիւին:

ԶԱՏԿՈՒԱՅ ԻԻՂԱԳԻՆ

Ս. Յարութեան ՏՕՒՄ ԱՌԹԻ,

ՎԱՏԱՀ ԵՆՔ,

որ ձեր բարեղաճ ժողովուրդը

ՊԻՏԻ ՉԱՌՈՆԱՅ ԿԱՏԱՐԵԼՈՒ

ԻԻՂԱԳԻՆԻ

ԻՐ ԱՐՏԱՔՈՒՄ ԱՌԻՐԱՏՈՒԹԻՒՄԻՆ:

ՏՆՕՐՀՆԷՔ

Տնօրհնէք փափաքող ընտանիքները,

թող բարեհաճին դիմել

Տ. Գառնիկ Աւ. Քինյ. Գոյումեանի,

հեռաձայնելով

514 909 5203 քիւին:



**ՔՐԻՍՏՈՍ ՅԱՐԵԱՒ Ի ՄԵՌԵԼՈՅ:
ՕՐՀՆԵԱԼ Է ՅԱՐՈՒԹԻՒՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ:**